ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղեկավար՝ Սաֆարյան Արմինե

Կատարող՝ Գևորգյան Քրիստինե

Բովանդակություն

Ներածություն *3*

Մեթոդական միավորումների աշխատանքը դպրոցում *4*

Հասարակագիտության ուսուցչի մասնակցությունը հաստատության առարկայական մասնախմբերի աշխատանքներին *8*

Փորձարարական մաս *12*

Եզրակացություն *15*

Գրականության ցանկ *16*

Ներածություն

Մեթոդական միավորմումները ուսուցիչներին տալիս են համագործակցելու, փորձի փոխանակման, հետաքրքիր ու նորարարական մտքեր քննարկելու հնարավորություն: Մեթոդական միավորումների անդամներեն ուսումնական հաստատության ուսուցիչներն են, ովքեր իրենց նվիրված աշխատանքն ուղղում են դեպի դպրոցի ու սովորողների շահերը: Աշխատանքն այստեղ ուղղված է ուսուցիչների մասնագիտական որակների, մեթոդական գիտելիքների բարձրացմանը:

Հետազոտության արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է հասարակագիտության ուսուցչի գործառույթների ու մանկավարժական որակների նոր պահանջներով:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ մեթոդական միավորումը պայմաններ է ստեղծում

- ուսուցչի մանկավարժական հմտությունների,
- յուրաքանչյուր ուսուցչի որակավորման բարձրացման,
- անհատական մեթոդական համակարգերի ձևավորման համար:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել հասարակագիտության ոսուցչի դերևը և մասնակցությունը առարկայական մասնախմբերի աշխատանքներին, ցույց տալով առարկայական մեթոդմիավորումների ազդեցությունը կրթության որակի բարձրացման վրա:

Հետազոտության նպատակին հասանելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- դիտարկել առարկայական մեթոդմիավորման դերը հասարակագիտություն առարկայի յուրացման գործընթացում
- բացահայտել հասրակագիտության ուսուցչի մասնագիտական գործունեության ընթացքում մեթոդականմիավորումների դերը մասնագիտական որակի բարելավման գործում
- ներկայացնել մեթոդական առաջարկություններ ուսուցչի մասնագիտական գործընթացը առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

Մեթոդական միավորումների աշխատանքը դպրոցում

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ: Այսօր ավելի բարձր պահանջներ է դրվում դպրոցների առարկայական մեթոդմիավորումների վրա: Այս առումով բավականին պատասխանատու խնդիր է առաջանում դպրոցի առարկայական մեթոդմիավորումների համար Նրանք պետք է պատրաստ լինեն իրենց փորձը և մտահղացումները ներկայացնելու իրենց գործընկերներին, կարողանան կիրառել կրթության և դաստիարակության նոր մեթոդներ,եղանակներ, հնարներ ու ձևեր, որպեսզի մշակվի համագործակցային և նոր մոտեցումների համապատասխան վարքագիծ:

Անհրաժեշտ է, որ ուսուցիչները ունենան այնպիսի որակներ, ինչպիսիք են կոմպետենտությունը, նորի զգացումը, նախաձեռնողականություն ստանձնելու պատրաստակամությունը ,խնդիր դնելու և դրա լուծումը մինչև վերջ հասցնելու Կարողություն: Հետևաբար ուսուցիչների մեթոդական աշխատանքը կազմակերպող գլխավոր կառույցը առարկայական մեթոդմիավորումն է, որը քննարկում է. առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները,մեթոդական ձեռնարկները, և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին տալիս երաշխավորություններ:

Մեթոդմիավորումների կազմման հարցում որոշում կայացնողը դպրոցի մանկավարժական խորհուրդն է: Խորհրդի նիստում խորհրդակցական մարմնի անդամները քննարկում են մեթոդական միավորումների կազմման հարցն ու անհրաժեշտության դեպքում ընդունում այն: Աշակերտների թվով պայմանավորված՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում այդուհետ ձևավորվում են առարկայական մեթոդական միավորումներ մոտ կամ հարակից առարկաներից: Առարկայական մեթոդական միավորումներն ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ՝ հարակից առարկաների ուսուցիչներից: Դասվարների համար ստեղծվում է տարրական կրթության մեթոդական միավորում[1]:

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876 ՀՀ Կառավարության որոշում:

Առարկայական մեթոդ միավորումները կատարում են հետևյալ գործառույթները.

1) քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները, և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին (դասվարներին) տալիս երաշխավորություններ.

2) ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և ներդնում պրակտիկ աշխատանքում.

3) նպաստում է ուսուցիչների (դասվարների) որակավորման բարձրացմանը.

4) որակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչներին (դասվարներին) նախապատրաստում է ատեստավորման.

5) կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական, խորհրդակցություններ, խորհրդատվություններ.

6) ուսուցիչներին հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ.

7) սահմանված կարգով կազմակերպում է փորձարկվող դասագրքերի փորձաքննություն.

8) մանկավարժական խորհրդում քննարկելուց հետո առաջարկություն է ներկայացնում հանրակրթական դպրոցի տնօրենին՝ ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման մասին.

9) կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում հանրակրթական դպրոցի տնօրենին.

10) կազմակերպում է դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ[2]:

[2]https://www.arlis.am/documentview.aspx?docid=59769

Տարբեր հանրակրթական դպրոցների և ուսուցիչների նախաձեռնությամբ կարող են ստեղծվել միջդպրոցական մեթոդական միավորումներ: Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են: Մեթոդմիավորումն իրականացնում է մեթոդական աշխատանքի կազմակերպումն ուղեկավարումը ՝ հաշվի առնելով դպրոցի առջև ծառացած խնդիրները, ուսումնական գործնթացի կազմակերպման առանձնահատկությունները յուրաքանչյուր ուսուցչի մասնագիտական զագացման մակարդակը: Ուսուցչի մասնագիտական կարողունակությունը, դա ստեղծագործ, անհատական, նորը ընդունելու պատրաստակամություն, մանկավարժական նորամուծություններին համարժեք վերաբերմունք է, ինչպես նաև սովորելու կայուն մոտիվացիա ձևավորելու ունակություն է, որը բարելավում է կրթության որակը, ուսուցիչը պետք է ունենա կրթության ոլորտին և իր մասնագիտությանը վերաբերող հիմնախնդիրներին իրազեկ լինելու և դրանց լուծման ուղիների մասին սեփական կարծիք և ակտիվ մասնակցություն ունենալու գիտակցություն և կարողություն[3]:

Ուսուցչի կարողունակության ու մասնագիտական զարգացումը կրթության որակի բարձրացման կարևորագույն պայմաններից է: Մ/Մ -ն աշխատանքն ուղղված է ուսուցչի մասնագիտական աճի ապահովմանը, նրա ստեղծագործական ներուժի զարգացմանը, կրթության մակարդակի բարձրացմանը, դաստիարակությանը, զարգացմանը, սոցիալականացմանը և սովորողների առողջության պահպանմանը: Մ/մ-ի նպատակն է նպաստել սովորողների անհատական զարգացմանը և բարձրացնել ուսուցչի ստեղծագործական ներուժն ու որակավորումը: Մեթոդական միավորման աշխատանքի հիմնական խնդիրներն են.

- ուսուցիչներին մեթոդական աջակցություն ցուցաբերել կրթական գործընթացի որակը բարելավող ծրագրերի մշակման և իրականացման գործում,
- բարձր մեթոդական մակարդակի ապահովում,
- ուսուցիչների մասնագիտական զարգացում,
- ստեղծագործական աշխատող ուսուցիչների օրինակելի մանկավարժական փորձի բացահայտում, ընդհանրացում և տարածում,

[3]Թոփուզյան Ա., Մանկավարժական միտք, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները», 2012, էջ 13:

- ուսումնական գործընթացում ուսումնական, մեթոդական և դիդակտիկ նյութերի և ծրագրային ապահովման ավտոմատացված վերապատրաստման համակարգերի, դասարանների տեղեկատվական աջակցության համակարգերի, տեղեկատվական և գրադարանային համակարգերի ներդրում:

Առաջադրված խնդիրների հիման վրա կառուցվում է մեթոդական միավորման ողջ աշխատանքը: ՄՄ-ն գործունեության հիմնական նպատակը ուսուցիչների մասնագիտական զարգացման և մեթոդական ուսումնառության ապահովումն է միասնական որոնողական աշխատանքի միջոցով: Նպատակի իրագործման համար իրականացվում են աշխատանքներ հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Ուսումնադաստիարակչական գործունեություն.

2. Ուսումնամեթոդական գործունեություն.

3. Կազմակերպական - մեթոդական գործունեություն.

4. Տեղեկատվական - վերլուծական գործունեություն.

5. Խորհրդատվական գործունեություն.

6. Հայտորոշիչ գործունեություն.

7. Գիտամեթոդական գործունեություն.

Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքներում որոշակի կարևորություն է տրվում նաև ուսուցիչների ինքնակրթության կազմակերպմանը: Եվ եթե գիտելիքների սկզբնական ընկալումը կայուն չէ, ապա հաջորդող աշխատանքը պետք է լինի անհատական և պետք է իրագործվի այն ծավալով ու տեմպով, որ անհրաժեշտ են յուրաքանչյուր անձի: Իսկ դա հնարավոր է միայն ինքնուրույն կրթական գործունեության պայմաններում: Առավել արդյունավետ ձևով այն կազմակերպել հնարավոր է մեթոդմիավորումների նիստերի ընթացքում՝ արդյունքները ներկայացնելով տարբեր ձևերով. զեկուցումներ, բաց դասեր, ստեղծագործական հաշվետվություններ: Այս բոլորը պլանավորվում է նախապես և վերահսկվում է մեթոդմիավորման ղեկավարի կողմից: Մ/մ-ը քննարկում է առարկաների ուսումնական աշխատանքային ծրագրերի և թեմատիկ պլանների կառուցվածքի և բովանդակության բարելավման, պարապմունքների անցկացման

մեթոդների, բոլոր տեսակի դասընթացների արդյունավետության և որակի, կրթական և նյութական բազայի բարելավման, որակավորման բարձրացման:

Հասարակագիտության ուսուցչի մասնակցությունը հաստատության առարկայական մասնախմբերի աշխատանքներին

Ուսուցչի համար գործընկերների հետ համագործակցությունը խիստ կարևոր նշանակություն ունի: Օրինակելի փորձը, որը սկսնակ ուսուցիչը կարող է վերցնել ավագ ու փորձառու գործընկերներից, մեծապես նպաստում է, որպեսզի ուսուցիչն արդեն գործնականում պատկերացում կազմի այս կամ այն խնդրո առարկայի վերաբերյալ: Ուստի սովորել սովորեցնելով բանաձևն այստեղ լայն կիրառելի է: Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, տեղեկացված են ավելի հետաքրքիր, արդյունավետ ու համարձակ դասավանդման մեթոդներին: Այս պարագայում հավանականությունն ավելի մեծ է, որ վերջիններս կարող են կառուցել արդյունավետ անհատական դասեր և ապահովել շարունակական ուսուցում: Նրանք ի վիճակի են կազմել և ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցառումներ, որոնց միջոցով համապատասխանաբար զարգացվում են աշակերտների ըմբռնումը և հմտությունները:

Ստացվում է, որ օրինակելի փորձի փոխանակումը կարող է մոտիվացնել սկսնակ, ոչ հմուտ ուսուցիչներին ամեն կերպ գտնել ճանապարհներ նոր հմտություններ ու կարողությունների ձեռքբերման համար: Այստեղ իրականացված բազմաբովանդակ գործառույթները օգնում են ուսուցչին համակարգել իր ողջ մարդկային ներուժը, աշխատանքին մոտենալ ստեղծագործաբար, գնալ նոր ու հետաքրքիր գաղափարների որոնման ճանապարհով, ինչի արդյունքում աշխատանքը դառնում է համակարգված ու արդյունավետ: Ուսումնական գործընթացը համակարգվում է, քանի որ մինպատակի իրագործման համար աշխատում է մանկավարժների ամբողջ մի թիմ, բացառվում է ցանկացած անհատական շահ, բոլորը գործում են՝ նպատակ ունենալով համակարգել ուսումնադաստիարակչական գործընթացն ու բարձրացնել կրթության առաջնային շահակիցների՝ սովորողների կրթության որակը: Ուսուցիչները, մեթոդական միավորումներում իրենց աշխատանքը պլանավորելիս, պետք է հաշվի առնեն կրթության առաջնային շահակիցների՝ սովորողների շահերը: Ստացվում է, որ սովորողը նույնպես որոշակի կերպով, թեկուզ անուղղակի մասնակցում են

կրթական համակարգի այս կամ այն օղակի աշխատանքներին: Սովորողների մասնակցությունը կրթական գործընթացին ենթադրում է, որ նրանք պետք է դառնան այդ գործընթացի գործընկերային կողմ՝ իրենց դերերով, պատասխանատվությամբ ու իրավասության շրջանակով:

Այս սկզբունքի համաձայն սովորողի ու ուսուցչի միջև պետք է գործի համագործակցություն, վստահություն, և հարգանք, քանի որ կրթողները իրենց ևս սովորողներ են և սովորողը կարող է աղբյուր հանդիսանալ կրթողի համար նոր գիտելիքների ձեռքբերման համար[4]:

«Հասարակագիտություն» առարկայի նպատակն է ձևավորել հիմնարար արժեքներ կրող, հուզական հասունություն դրսևորող, կշռադատող, մարդու և հասարակության հիմնահարցերը գիտականորեն ընկալող, հետազոտող և մեկնաբանող, ճանաչողական, սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների տիրապետող, ազգային և համամարդկային հիմնախնդիրներին իրազեկ, ազգային ու համամարդկային արժեքներ կրող, ժողովրդավարական և կայուն զարգացման արժեհամակարգով առաջնորդվող, սոցիալապես ակտիվ և պատասխանատու քաղաքացի[5]:

Ժամանակակից աշխարհում չափազանց կարևոր է հասարակական կյանքի օրինաչափությունների մասին գիտելիքներ ունենալը: Այդ գիտելիքների միջոցով մենք կարող ենք հասկանալ ու բացատրել մեզ շրջապատող աշխարհը, կառուցել արտաքին աշխարհի մասին հիմնավոր ներքին պատկերացում: Հասարակական գործընթացների բազմազանությունը, տարբեր երևույթների մասին առկա տարակարծությունները կարևոր նախապայման են սովորողների մոտ քննադատական և ստեղծագործական մտածողություն զարգացնելու տեսանկյունից:

Ժամանակակից աշխարհում էապես մեծացել են մարդկանց միջև առկա աշխարհայացքային տարբերությունները, ինչի արդյունքում հաճախ փորձում են մարդկանց ապակողմնորոշել, մանիպուլացնել, զրկել ինքնուրույն մտածելու հնարավորությունից: Այս խնդիրներին դիմակայելու համար կարևոր է, որպեսզի սովորողներն ունենան քննադատական մտածողություն: Վերջինս հնարավորություն է տալիս հասարակական երևույթները դիտարկել տարբեր կողմերից, կշռադատել դրանց դրական և բացասական ասպեկտների մասին և կայացնել հիմնավորված որոշումներ: Հասարակական գործընթացների բազմազանությունը նաև լավ

[4] http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում, էջ 4:
[5] https://escs.am/files/files/2020-07-17/50b54b298cdad8a2d7363192620d96e8.pdf

հնարավորություն է ստեղծում դրսևորելու ոչ ստանդարտ մոտեցումներ և դրանով իսկ զարգացնելու սովորողների ստեղծագործական մտածողությունը: Այս առարկայի դասավանդման շրջանակում առաջնային է համարվում քաղաքացիական, իրավական, տնտեսական, մշակութային, մեդիա գրագիտության ձևավորումը, որոնք համարվում են բարեկեցիկ հասարակության հենասյուները:

«Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը հնարավորություն է տալիս սովորել մարդու մտածողության մասին և ձեռքբերած գիտելիքներն ու հմտությունները կիրառել կոնկրետ իրավիճակներում: Բոլոր մեթոդական միավորումներն իրականացնում են առարկայի վերաբերյալ ժամանակակից ուսուցման հայեցակարգերի ուսումնասիրություններ, վերահսկում դասավանդման արդյունավետությունը՝ օգտագործելով այլընտրանքային միջոցներ, գործիքներ ու դասագրքեր: Եթե մեթոդական աշխատանքը դպրոցում լավ է կազմակերպված, ապա հնարավոր կլինի ընդգծված կերպով բարձրացնել ուսումնադաստիարակչական գործընթացի որակը: Ուսուցչի մասնակցությունը մեթոդական միավորմանը նպաստում է մասնագիտական վարպետության, մեթոդական կուլտուրայի, ստեղծագործական ներուժի բարձրացմանը: Մեթոդական աշխատանքների իրականացման հիմնական ձևերից են դասախոսությունը, գործնական սեմինարները, ստեղծագործական բանավեճը, որոնողա-ստեղծագործական աշխատանքները:

Այսպիսով կարող ենք ներկայացնել հասարակագիտություն առարկայից ուսուցչի կողմից կազմակերպված մեկ դասաժամը, որը անցկացվել է բանավեճի մեթոդով, որը նախորոք կազմվել է ուսուցչի կողմից և բանավեճի ավարտից հետո ներակայացվելու է մեթոդ-միավորման նիստին:Այսպիսով ընտրում ենք քննարկման թեման և այն մեթոդներն ու հնարները որոնք կարող ենք օգտագործել դասապրոցեսը ավելի հետաքրքիր դարձնելու համար: Դասարանում հանրային խնդիրներ քննարկելու նպատակն է գաղափարները քննադատելու և միմյանց հանդեպ հոգածություն դրսևորելու, հարաբերությունների ուժն օգտագործելու միջոցով կրթել անհատներին և խմբերին: Հանրային խնդիրների ուսումնասիրման մոդելը կիրառելիս ուսուցիչը հանդես է գալիս որպես խթանող՝ օգնելով սովորողներին արդյունավետ քննարկումներ վարելու միմյանց հետ: Նման քննարկումներին նախապատրաստելու համար ուսուցիչը պետք է աշխատի

գործնական երկխոսություն խթանող և քննարկման հմտությունները զարգացնող միջավայր ստեղծել[6]:

Թեմա՝ Մարդ- տնտեսություն

Նպատակ՝ Սովորողները կկարողանան համադրել իրենց կարիքները, ցանկությունները և պահանջմունքները դրանք բավարարելու համար առկա ռեսուրսների հետ, կկարողանան մեկնաբանել սակավության հիմնախնդիրը:

Քննարկում՝ «Իսկ ի՞նչ կլիներ, եթե ռեսուրսները չլինեին անսահմանափակ, եւ սակավության խնդիր չլիներ»: Քննարկմանը հավելել նաեւ «Ո՞ւմ է վերաբերում սակավությունը» հարցը: .

- Ինչպե՞ս կարող են խնայողությունները նպաստել մեր կարիքների և ցանկությունների բավարարմանը:
- Ինչպիսի՞ նպատակների համար խնայողությունների ինչպիսի՞ պլան է պետք մշակել:

Դասարանը բաժանվում է խմբերի և ներակայացնում են իրենց դիրքորոշումները տվյալ թեմայի վերաբերյալ:

Շատ կարևոր է ճիշտ կազմակերպել քննարկումը: Սովորողները պետք է յուրացնեն կարգապահ քննարկման տեխնիկաները:

Դրանք ներառում են.

- ուշադրություն ուրիշների ասածների նկատմամբ,
- տարաձայնություն հարուցած խնդրի հստակեցում,
- օրակարգի ու ընթացակարգի մշակում և կիրառում,
- քննարկման ընթացքում անցումների և փոփոխությունների նշում,
- հնարավոր խոչընդոտների վերացում,
- անդրադարձ քննարկման գործընթացին և կշռադատում:

Քննարկման ավարտին սովորողները պետք է կարողանան՝

- ✓ Հետևություններ անել կարիքների, ցանկությունների անսահմանափակ և ռեսուրսների սահմանափակ լինելուց:
- ✓ Համադրեն անձնական և ընտանեկան եկամուտներն ու ծախսերը, պլանավորեն բյուջեն՝ հաշվի առնելով հնարավոր ռիսկերը:

[6] https://www.kas.de/documents/269781/0/Methodisches-Handbuch-zur-Gesellschaftskunde.pdf/ec95e1b0-d032-f829-7ee1-39d526a66ab8?version=1.0&t=1613120170204

- ✓ Բացատրեն ապագայի համար ներկայում խնայողություններ կատարելու նշանակությունը:

Ավարտից հետո հրավիրվում է առարկայական մեթոդ-միավորման նիստ, որտեղ քննարկվում է դասապրոցեսի արդյունավետությունը, թեմայի կարևորությունը, ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունը: Կարող ենք արձանագրել, որ մեթոդական միավորումների աշխատանքը դպրոցում մեծապես նպաստում է կրթության նոր որակի բարձրացմանը և կառուցվում է յուրաքանչյուր անդամի աշխատանքի հիման վրա:

Փորձարարական մաս

Հասարակագիտության ուսուցչի մասնակցությունը հաստատության առարկայական մասնախմբերի աշխատանքների վերաբերյալ կատաարել ենք հարցում, դրա կարևորության վերաբերյալ:



Արդյո՞ք մեթոդական միավորումներում ուսուցիչների աշխատանքը մեծապես օգնում է կրթական ոլորտում նորարարություններին ծանոթացմանը:

Copy

15 responses



Ինչպե՞ս կգնահատեք մեթոդմիավորման շրջանակներում կազմակերպված գործնական խաղերը, մեթոդական մրցույթները, մեթոդական վարպետության դասերը:

Copy

15 responses





Հարցումների մասնակից ուսուցիչների հիմնական մասը դրական էին գնահատում մեթոդական միավորման ներսում ուսուցիչների համագործակցության նշանակությունը կրթության որակի բարձրացման, դպրոցում մանկավարժական աշխատանքի համակարգման ու բարոյահոգեբանական կայուն միջավայրի ապահովման տեսանկյունից: Կարևորվում է հասարակագիտության ուսուցչի մասնակցությունը մեթոդմիավորման աշխատանքներին, քանի որ այն ներկայումս կարևոր գիտություններից մեկն է: Մեթոդմիավորումների աշխատանքն ուղղակի անհրաժեշտություն է և մեծապես պայմանավորում է ուսուցիչների առողջ ու նպատակային համագործակցությունը դպրոցում:

Եզրակացություն

Սույն հետազոտական աշխատանքի ուսումնասիրման ավարտին հանգել ենք հետևյալ եզրակացություններին՝

1. Մեթոդական միավորումը նպաստում է ուսուցչի մասնագիտական աճին, ճիշտ կազմակերպելով և համակարգելով աշխատանքը: Ուսուցիչների ջանքերը, որոնք ուղղված են ուսումնական գործընթացի արդյունավետ ընթացքին, միշտ էլ արդարացված են: Դրա վառ ապացույցը սովորողների զանազան նվաճումներն ու ձեռքբերումներն են:
2. Մեթոդական աշխատանքի հիմնական նպատակն է կատարելագործել ուսուցիչների մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, զարգացնել նրանց ստեղծագործական ներուժը և բարելավել մանկավարժական գործընթացի արդյունավետությունն ու որակը:
3. Առարկայական մեթոդական միավորումներում համակարգված աշխատանքի արդյունքում հասարակագիտության ուսուցիչը կարող է ունենալ մեծ նվաճումներ, քանի որ միասնական աշխատանքն ուղղված է բոլորի հաղթանակներին, այն է՝ ունենալ բարձր ու նոր որակի ուսումնական գործընթաց:ՈՒսուցչի մասնագիտական որակների բարձրացման համար շատ կարևոր գործընկերների հետ համագործակցությունը առարկայական մասնախմբերի աշխատանքների շրջանակներում:
4. Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ մեթոդական միավորումների աշխատանքը դպրոցում մեծապես նպաստում է կրթության նոր որակի բարձրացմանը և կառուցվում է յուրաքանչյուր անդամի աշխատանքի հիման վրա: Հասարակագիտության Յուրաքանչյուր ուսուցիչ իր աշխատանքի շնորհիվ կարող է էլ ավելի արդյունավետ դարձնել Այս օղակի արդյունավետ աշխատանքի դեպքում ուսումնական հաստատությունում չեն առաջանա ո'չ կարգապահական, ոչ ուսումնական հնարավոր բարդություններ:

Գրականության ցանկ

1. Թոփուզյան Ա., Մանկավարժական միտք, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները», Եր. , 2012:
2. https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876 ՀՀ Կառավարության որոշում:
3. https://www.arlis.am/documentview.aspx?docid=59769
4. http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում, էջ 4:
5. https://escs.am/files/files/2020-07-17/50b54b298cdad8a2d7363192620d96e8.pdf
6. https://www.kas.de/documents/269781/0/Methodisches-Handbuch-zur-Gesellschaftskunde.pdf/ec95e1b0-d032-f829-7ee1-39d526a66ab8?version=1.0&t=1613120170204